



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՅ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում»

Առարկան՝ աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Կ. Աբազյան

Ուսումնական հաստատություն՝ Իսակովի անվ. 132 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

<u>Ներածություն</u>	3
<u>1.Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնական առանձնահատկությունները</u>	4
<u>2.Ուսուցչի նոր դերը տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակաշրջանում</u>	5
<u>3.Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը` որպես դրական/օժանդակող գործոն</u>	6
<u>4.SS-ի բացասական ազդեցությունը: Համացանցը և համակարգչային խաղերը</u>	8
<u>Գործնական առաջարկներ</u>	12
<u>Եզրակացություն</u>	14
<u>Օգտագործված գրականության ցանկ</u>	17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նորագույն տեխնոլոգիաները մարդկային հասարակության համար ստեղծել են նոր աշխարհ, սակայն վերաբերմունքը դրանց նկատմամբ միանշանակ չէ: Մարդկային կյանքի և հոգու ոչ մի անկյուն զերծ չի մնացել տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցության հետևանքներից: Դեռևս ամբողջությամբ պարզաբանված չէ, թե ի՞նչ դեր են խաղում տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերը կրթության և դաստիարակության հարցում: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը այնքան արագ է զարգանում, որ մանկավարժական ուսումնասիրությունները կորցնում են արդիականությունը: Մանկավարժների առաջ ծառայած խնդիրները շատ են:

Դրանցից են.

- տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը անհատի մտավոր զարգացման վրա,
- տեղեկատվական տեխնոլոգիաները և ուսուցման որակը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների դաստիարակչական ազդեցությունը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողների հոգեբանական զարգացման վրա և այլն:

Աշխատանքի նպատակը և խնդիրը աշակերտների հոգեբանական զարգացման գործում անընդհատ զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաների թողած դրական և բացասական ազդեցության բացահայտումն է, դրա համակարգային վերլուծությունը և խնդիրների լուծման արդյունավետ մեխանիզմների մշակումը:

Ժամանակին բակերում անհոգ խաղացող երեխաներին այսօր եկել է փոխարինելու մի սերունդ, որը խաղում է համակարգչային և բջջային խաղերով: Տեղեկատվական տեխնոլոգիաների դարում ծնված երեխաները լույս աշխարհ են գալիս տեղեկատվությամբ ծանրաբեռնված միջավայրում: Այս խնդիրն անդրադարձել են բժիշկ հոգեբաններ, հայտնի մանկավարժներ և գիտնականներ: Չնայած վերջին տասնամյակներում գրականության մեջ տեղ գտած բազմաթիվ վերլուծական և մի շարք հետազոտական աշխատությունների, անձի սոցիալականացման, հոգեբանական խնդիրներն ու նորագույն տեխնոլոգիաների ազդեցությունն այդ գործընթացի վրա առայժմ լիարժեք ուսումնասիրված չեն:

1. Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և օգտագործման նպատակները

Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաները մի շարք զարգացող և զարգացած երկրների սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր ուղղություններից են: Ձեռագրերի ստեղծումից հետո, առաջին քայլերը դեպի տեղեկատվական հասարակություն, հատկանշվեցին էլեկտրոնային հեռագրի, այնուհետև հեռախոսի և ռադիոյի միջոցով: Այսօր դժվար է պատկերացնել կյանքը առանց հեռուստատեսության, բջջային հեռախոսների և իհարկե՝ առանց համացանցի: ՏՀՏ-ների լայնածավալ կիրառումը իր տեղն է գտնում նաև դասապրոցեսներում: Աշակերտների ինֆորմացվածության մակարդակը կարևոր դերակատարություն ունի ժամանակակից կրթության որակի և 21-րդ դարի երեխայի մոտ տեղեկատվական մշակույթի ձևավորման համար: Այստեղից էլ բխում են ՏՀՏ-ների օգտագործման նպատակներն ու կիրառման ուղղությունները:

- մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը,
- նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև բարձրացնել սովորելու շարժառիթը,
- բարելավել դասի անցկացման մեթոդները,
- ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարակության արդյունքները,
- պլանավորել և համակարգել սեփական աշխատանքը,
- օգտագործել այն որպես ինքնակրթության միջոց,
- արագ և որակյալ պատրաստվել դասին:

Հաղորդակցային տեղեկատվական տեխնոլոգիաների, համացանցի կիրառումը օր օրի ավելի մեծ քայլերով է մուտք գործում կրթական ոլորտ, ուստի այժմ չափազանց կարևորվում է դրա ճիշտ և գրագետ կիրառումը:

2. Ուսուցչի նոր դերը տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակաշրջանում

Կրթության արդյունավետությունը միշտ կախված է եղել ուսուցիչների պատրաստվածության մակարդակից: Այսօր ուսուցիչն առաջվա պես ուսուցման- ուսումնառության գործընթացի գլխավոր գործող անձն է, սակայն տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության ինտեգրացումը նպաստում է ուսուցչի նոր դերի ձևավորմանը:

Բարձր տեխնոլոգիական միջավայրում ուսուցիչը դառնում է ոչ միայն տեղեկատվության և ակադեմիական փաստերի աղբյուր, այլ նաև աշակցում է աշակերտներին հասկանալու ուսուցման բուն գործընթացը: Նա օգնում է, որ աշակերտները կարողանան գտնել իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը, պարզել, թե արդյոք այն համապատասխանում է տրված պահանջներին, ինչպես նաև հասկանալ, թե ինչպես կարելի է օգտագործել այդ նյութը՝ տրված հարցերին պատասխանելու և բարդ խնդիրներ լուծելու համար:

Յուրաքանչյուր աշակերտ տարբեր կերպ է յուրացնում նոր գիտելիքները: Առաջ ուսուցիչների համար դժվար էր անհատական մոտեցում գտնել յուրաքանչյուր աշակերտի համար: Իսկ հիմա, համակարգչային ցանցերի և էլեկտրոնային միջոցների կիրառմանը զուգընթաց, դպրոցները հնարավորություն են ստացել նոր տեղեկատվությունն այնպես մատուցել, որ բավարարեն յուրաքանչյուր աշակերտի անհատական պահանջները:

Միմյանց հետ կապի և հաղորդակցության համար օգտագործվող տեխնոլոգիաները, պահանջվող տեղեկատվությունն անհրաժեշտ ժամանակին տրամադրելով, կարող են ուսուցումն ու ուսումնառությունը դարձնել ավելի հետաքրքիր, այսօրվա իրողություններին ավելի համահունչ: Այդ գործընթացը մեծ մասամբ պայմանավորվում է նախկինում ստացած գիտելիքներով, սպասելիքներով և ստացած արդյունքներով, որոնք էլ հենց ձևավորում են ուսումնառության միջավայրը:

Ուսուցչի դերին անդրադառնալու անհրաժեշտությունը բխում է որակյալ կրթություն ապահովելու կարևոր պահանջից: Որակյալ դասավանդումն ուսումնական ծրագրից և բովանդակությունից բացի շատ այլ տարրեր է ընդգրկում: Սա նաև այն կետն է, որտեղ հատվում են կրթության բովանդակությունն ու այն ներկայացնող մարդու

անհատականությունը: Եթե մանկավարժության ավտորիտար-հրամայական մոտեցման պարագայում անտեսվում և նվազեցվում էին սովորողների անհատական որակներն ու պահանջմունքները, ինչի արդյունքում սովորողն օտարվում էր սեփական ուսումնառության, կրթության գործընթացին առնչվող որոշումների կայացումից, ապա հումանիստական մանկավարժությունը հասարակության, դպրոցի, մանկավարժների ուշադրությունը բևեռում է ակտիվ սովորողի՝ որպես ուսումնական գործընթացի իրավահավասար սուբյեկտի, մասնակցի վրա՝ հաշվի առնելով նրա ներուժն ու ձեռք բերած փորձը:

3. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը՝ որպես դրական/օժանդակող գործոն

Գիտատեխնիկական առաջընթացը, տեխնոլոգիական զարգացումները, գլոբալացումը և ընդհանուր առմամբ փոխկապակցված աշխարհն այսօր շատ լուրջ ազդեցություն են ունենում հասարակության և կրթության վրա: Մեր օրերում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները մեծ տեղ են գրավում մարդկության կյանքում: Անքննելի իրողություն է այն, որ քաղաքացիական հասարակության կայացումն ու ամրապնդումն ամեն մի ազգի ոչ միայն գոյապահպանության գրավականն է, այլև աշխարհին իր գիտական, քաղաքական, մշակույթային ելևէջումներով ընկալելի և հասկացված լինելու կարևորագույն հիմքը:

Հաղորդակցային տեղեկատվական տեխնոլոգիաները գնալով ավելի մեծ տեղ են սկսում գրավել հատկապես կրթական ոլորտում, ուստի այժմ խիստ կարևորվում է դրանց նպատակային և գրագետ օգտագործումը: Մանկավարժական տեսանկյունից ինտերնետը շատ տարբեր և հետաքրքիր հնարավորություններ է ընձեռում, ուստի կարևոր է այն փաստը, որ աշակերտին մենք նախ պետք է սովորեցնենք ինքնուրույն սովորել, այնուհետև շեշտադրենք ուսումնառության անընդհատ, հետաքրքիր և կյանքի ողջ ընթացքում շարունակական ընթացող գործընթաց լինելը: Հետևաբար պետք է աշակերտի մոտ զարգացնել նախ և առաջ ստեղծագործական, քննադատական մտածողություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակություն և ձևավորել մշտապես սովորելու պահանջ, ինչպես նաև ձեռք բերված գիտելիքներն առօրյայում ակտիվորեն կիրառելու կարողություն: Միայն այս դեպքում կկարողանանք հասնել այն պահանջի բավարարմանը, ըստ որի ուսումնական գործընթացն առավելապես

աշակերտակենտրոն գործընթաց է, որտեղ ուսուցիչը կկարողանա հիմնականում հանդես գալ ղեկավարողի, օգնող-օժանդակողի դերով:

Էլեկտրոնային միջոցների կիրառման արդյունքում հնարավորություն է ընձեռվում նոր նյութն այնպես փոխանցել, որ ամեն աշակերտ իր հնարավորություններին համապատասխան կարողանա այն յուրացնել:

Մինչ համացանցի, ժամանակակից սարքավորումների բացասական կողմերի մասին խոսելը, կարծում ենք, արժե մի փոքր էլ անդրադառնալ նաև դրական կողմերին և ընձեռած հնարավորություններին: Օրինակ ուսուցչին տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները տալիս են բազում հնարավորություններ թե՛ որպես դասավանդման գործիք, և թե՛ որպես հետազոտության ու դասի կազմակերպման միջոց:

Ինֆորմացիոն-հաղորդակցական տեխնոլոգիաները նաև հնարավորություն են տալիս ստեղծել վիրտուալ միջավայր, որտեղ հնարավոր է իրականացնել տարբեր օնլայն հանդիպումներ, քննարկումներ, նախագծեր, ակտիվ ուսումնառություն և այս ամենն առանց տարածության և ժամանակի սահմանափակման:

Ներկայումս անձի կայացման հարցում ակնհայտորեն մեծ է մեդիատեխնոլոգիական ազդեցությունը: Սա հատկապես ուժեղ է ազդում երեխայի վրա: Վերջինս շատ ավելի մեծ հաճույքով հեռուստացույց է դիտում, քան գիրք կարդում: Երեխայի դաստիարակության ու շրջակա աշխարհի ընկալման վրա շատ մեծ դեր ու ազդեցություն է ունենում նոր տեղեկատվության, գովազդի հզոր հոսքը, հեռուստատեսության մեջ համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը, համակարգիչների տարածումը: Մեծապես փոխվում է նաև նրա սիրելի դարձած գործունեության՝ խաղի բնույթը, փոխվում են նաև նրա սիրելի հերոսներն ու նախասիրությունները: Նախկինում ցանկացած թեմայով տեղեկատվությունը երեխան կարող էր ստանալ դասագրքերի, ուսուցչին կամ ծնողին տրված հարցերի կամ միգուցե դասի սեղմագրի միջոցով, իսկ այսօր, հաշվի առնելով ներկայիս իրողությունները, ուսուցիչն ուսումնական գործընթացի մեջ պետք է ներմուծի տեղեկատվության նոր մեթոդներ:

Քանի որ երեխայի ուղեղը սովոր է հեռուստատեսությամբ զվարճալի ծրագրերի միջոցով տեղեկություններ ստանալուն, ապա ավելի հեշտ կընկալի դասի ժամանակ մեդիա միջոցների օգնությամբ առաջարկված ինֆորմացիան:

21-րդ դարում հաջողության հասնելու համար միայն ակադեմիական գիտելիքները և քննադատական մտածողությունը չեն կարող բավարարել: Անհրաժեշտ են նաև որոշակի տեխնիկական հմտություններ:

Անհրաժեշտ է երեխաներին սովորեցնել կարճ ժամանակահատվածում յուրացնել, փոփոխել և գործնականում օգտագործել տեղեկատվության հսկայական զանգվածները: Շատ կարևոր է այնպես կազմակերպել դասավանդման պրոցեսը, որ երեխան ակտիվորեն, հետաքրքրությամբ աշխատի դասի ժամանակ: Այդ դժվար հարցի լուծման գործում ուսուցչին օգնության կարող է գալ ժամանակակից տեխնոլոգիաների և ավանդական մեթոդների զուգակցումը: Դասի ժամանակ համակարգչի կիրառումը կարող է շարժունակ, խիստ դիֆերենցված ու անհատական դարձնել ուսուցման պրոցեսը: Դասավանդման այս մեթոդը գրավիչ է նաև ուսուցիչների համար, քանի որ թույլ է տալիս բացահայտել և հասկանալ երեխայի կարողություններն ու գիտելիքները, դրդում է փնտրել ուսուցման նոր, ոչ ավանդական ձևեր ու մեթոդներ:

4. SS-ի բացասական ազդեցությունը: Համացանցը և համակարգչային խաղերը

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և գլոբալացումը հանգեցնում է հասարակության հոգևոր կյանքի արմատական փոփոխության: Համացանցը, տարբեր սարքավորումները դարձել են մեր հասարակության անբաժան մասը՝ իրենց հետ բերելով նաև մի շարք բացասական երևույթներ: Վերջինը հատկապես վերաբերում է համակարգչային խաղերին:

Շատ մարդիկ օրվա մեջ ամենաքիչը 3 ժամ տրամադրում են օնլայն խաղերին: Կրտսեր դպրոցականների համար սա նույնպես բավականին հետաքիքի է, քանի որ օնլայն խաղերը նրանց թույլ են տալիս ներգրավվել այնպիսի գործընթացներում, որոնք անհասանելի են իրական կյանքում: Համացանցային հաղորդակցությանը հատուկ հնարավորությունները առցանց շփվողներին թույլ են տալիս սոցիալական առումով ավելի հաջողակ լինել առցանց ռեժիմում, քան առերես շփման ժամանակ:

Մարդիկ համակարգիչը օգտագործում են տարբեր նպատակներով: Նրանք կարող են օրական 5-6 ժամ համակարգչի առաջ լինել, բայց դա լինի անհրաժեշտությունից ելնելով՝

աշխատանքի ձևով կամ բնույթով պայմանավորված: Սա չի կարող որակվել որպես համակարգչային կախվածություն, մինչդեռ խաղերից կախվածությունը վնասակար է:

Ըստ Բելավինի՝ համակարգչային կախվածությունը լուրջ խնդիր է, որն ունի հետևյալ նախադրյալներն ու ախտանշանները: Երեխան սահմանված ժամանակից ավելի շատ ժամանակ է տրամադրում համակարգչին և համակարգչային խաղերին:

- Հրաժարվում է և չի կատարում տնային և դպրոցական պարտականությունները:
- Սոցիալական էջերից չի կարողանում կտրվել անգամ ճաշելիս կամ լոգանքի ժամանակ:
- Համակարգչի առջև նստելը գերադասում է ինչպես ընտանեկան տոնակատարություններից, այնպես էլ հասակակիցների հետ խաղերից:
- Համակարգչի թողած բացասական ազդեցությունը իր արտացոլումն է գտնում ուսումնական առաջադիմության, կենտրոնացվածության ու ուշադրության վրա:
- Համակարգիչն անջատելուն պես անմիջապես ձեռքն է վերցնում այլ սարքավորումներ և ինտերնետն ակտիվացնում դրանց միջոցով (հեռախոս, պլանշետ), իսկ ինտերնետային կապի վատացման կամ բացակայության դեպքում դառնում են ավելի նյարդային, դյուրագրգիռ և դրսևորում է ագրեսիվ վարք:

Ըստ Մոսկովենկոյի՝ համակարգչային խաղային կախվածությունը երեխայի մոտ կարող է հանգեցնել հետևյալ հնարավոր հոգեբանական և ֆիզիկական հապաղումների.

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մոտ կարող են առաջանալ մի շարք խանգարումներ, հիվանդություններ, մկանային թուլություն, ներքին օրգանների զարգացման արատներ, սկոլիոզ, քանի որ նրանք դեռ գտնվում են ֆիզիոլոգիական աճի շրջանում: Ծնողների ոչ պատշաճ ուշադրության հետևանքով համակարգչի ազդեցությունը կարող է շատ բացասական հետևանքներ թողնել երեխայի վրա: Որպես կանոն, երեխաներին հետաքրքրում են և ուշադրություն են գրավում տեղեկատվության այնպիսի տեսակները, որոնք նա չի կարող գտնել ծնողների կամ ուսուցիչների միջոցով: Այդ թվում՝ անբարոյականությունը, որը հեշտ հասանելի է համացանցում: Վերջինս ամուր և խորը հետք կարող է թողնել և նստել երեխայի գիտակցության մեջ:

Որոշ գիտնականներ պնդում են, որ «համացանցային կախվածության» հետևանքով վերջին տարիներին կտրուկ սկսել է նվազել գրագիտության աստիճանը, երեխաների մոտ առաջացել է Էկրանային տեսողություն և համակարգչային մտածողություն: Երեխաների հետաքրքրությունները նեղացել են սահմանափակվելով

համակարգչային խաղերով, սոցիալական ցանցերով, այսպիսով իրական կյանքից դուրս թողնելով գիտելիքի ստացման ամենավստահելի ու կարևոր աղբյուրը՝ գիրքը:

Կորչում է շփման կարիքը. հարազատներն ու իրական ընկերները դառնում են պակաս անհրաժեշտ և կարևոր, քան սոցիալական ցանցերի վիրտուալ ընկերները և նրանց գնահատականները: Համացանցում երեխան իրեն հերոս է զգում, մինչդեռ իրական կյանքում ունի շփման և առաջադիմության լուրջ խնդիրներ, որոնց հետևանքով դառնում է միայնակ և ներամփոփ:

Առաջանում են առողջական խնդիրներ. վատանում է տեսողությունը, երեխան դառնում է դյուրագրգիռ, հյուճված, ագրեսիվ, թուլանում է իմունիտետը, առաջանում են գլխացավեր, քնի խանգարում, գլխապտույտ, դող, վզային հատվածի մշտական լարվածությունը թույլ չի տալիս, որ բավարար չափով թթվածին գնա ուղեղ, վնասվում է դեռ չամրացած ողնաշարը:

Համակարգիչը կարող է նաև շատ օգտակար լինել երեխայի համար, եթե կիրառվի կոնկրետ ժամաքանակով և ուսման մեջ անհրաժեշտ ու կարևոր ինֆորմացիա հայթհայթելու նպատակի համար: Սակայն չպետք է գիրքը դարձնել երկրորդական, ավելին՝ երեխան, բացի համակարգչից, պետք է տեղեկատվության առաջնային աղբյուր համարի նաև գիրքը, գիտական ֆիլմերը, շրջակա միջավայրը, որը արդեն ընտանիքի և դպրոցի դաստիարակության գերխնդիրն է:

Այժմյան երեխաները հայտնվում են ոչ այդքան էլ հեռավոր անցյալում եղած միջավայրից ակնհայտ տարբերվող միջավայրում, որը հագեցած է տարբեր բնույթ ունեցող տեխնիկական միջոցներով: Արդեն սովորական դարձած ռադիոյի, հեռուստացույցի ու վիդեոյի կողքին հայտնվում են համակարգիչը, տարբեր կառավարման համակարգերով և պատկերային միջոցներով օժտված բազմազան խաղալիքներ: Հավանաբար այս ամենը աստիճանաբար կփոխի մեր ավանդական պատկերացումները կրթության ու գրագիտության մասին: Ու թեև արդեն նկատելի է, որ տեխնոլոգիական դարաշրջանի երեխաները գործ ունեն ավելի շատ էլեկտրոնային գրությունների տեսքով ներկայացվող, քան թղթի էջի վրա գետեղված տպագիր նյութի հետ, այնուամենայնիվ՝ կրթական-մշակութային միջավայրում շարունակում է կարևոր դեր խաղալ տպագիր գիրքը: Գիրքը ներկայացնում է արդեն պատրաստի աշխարհ և ազդելու ավելի քիչ հնարավորություն ունի, քան համակարգիչը, որն օգտագործողին ներքաշում է իր մեջ՝ առաջ բերելով միջավայրի և օգտագործողի աննախադեպ փոխկապակցվածություն և գործելու աներևակայելիորեն հարուստ դաշտ: Սա էլ իր թերություններն ունի:

Վ. Գլասերն իր «Դրական կախվածություն» աշխատությամբ փորձում է ապացուցել, որ ոչ բոլոր կախվածություններն են բացասական: Ըստ Գլասերի՝ մեր կյանքում կարևորվում է երեք գործողություն՝ սիրելը և սիրվելը, մյուսների կողմից ընդունվելը, երջանիկ լինելն ու ներգրավված լինելը նրանում, ինչ մենք իմաստալից ենք համարում: Երջանկության և իմաստալից կյանքի խթանիչներից մեկը համարվում է նախընտրած զբաղմունքի հանդեպ ունեցած դրական կախվածությունը: Հիմնվելով այս փաստարկի վրա՝ կարելի է ասել, որ տեխնոլոգիաներից օգտվելը շատերին դարձնում է սոցիալապես վատահ, առօրյան՝ իմաստալից և տալիս առավելություններ: Վ. Գլասերի կարևորագույն բնորոշումներից մեկի համաձայն՝ այն «ուղեղի գործունեության մի վիճակ է, որտեղ բացակայում է ինքնաքննադատումը, և որը խթանում է անհատի մեջ բարեկեցիկ և ուժեղ լինելու զգացումը: Նրանց մոտ, ում տեխնոլոգիաների օգտագործումն անհանգստացնում է կամ առաջացնում խնդիրներ, աշխատում է ուղեղի ինքնաքննադատական մասը: Նրանց համար, ովքեր հաճախ օգտվում են համացանցից և տառապում ախտանշաններով, համացանցը դրական կախվածություն չի համարվում: Այդ դեպքում նրանց կարելի է անվանել տեխնոլոգիական կախվածություն ունեցող անձ, ինչը կարող է հանգեցնել ժամանակի զուր վատնման և համարվել խնդրահարույց կախվածություն»:

Տարբեր հետազոտությունները ցույց են տվել, որ երեխաների հոգեկան զարգացման անհամաչափությունը ոչ թե բացառիկ, այլ, ընդհակառակը, միանգամայն բնորոշ երևույթ է: Երեխայի ունեցած շփման արատները տեղեկացվածության պայմաններում ոչ միայն չեն հաղթահարվի, այլ կարող են խորանալ: Երեխաները ռիսկի խմբում են նաև ինֆորմատիզացիայի այն բացասական հետևանքների առումով, ինչպիսին ինտերնետից կախվածությունն է: Ինֆորմատիզացիայի հոգեբանական հետևանքները հաշվի առնելը թույլ կտա խուսափելու օժտված երեխաների ուսուցման և զարգացման մեջ համակարգիչների լայն կիրառման հետ կապված բացասական շատ հետևանքներից:

Փոխակերպված միջավայրում, որտեղ երեխաներին մատչելի են նորանոր ծառայություններ ու փորձառություններ՝ նրանք մեծանում են իրենց ծնողներից տարբեր ձևերով: Սա պատճառ է դառնում խզումների մեծահասակների ու երեխաների՝ ծնողների ու զավակների, ուսուցիչների ու սովորողների այսօրվա սերունդների միջև, որ հանգեցնում է հասարակական մեծ փոփոխությունների:

Մեր օրերում համակարգչային խաղերը գրավիչ և հետաքրքիր են բոլորի համար: Ավելի գրավիչ քան գրքերը կամ, նույնիսկ, հեռուստատեսությունը: Սակայն, կարծում ենք, որ դրանք աճող սերնդին հեռացնում են գոյություն ունեցող արժեքային համակարգից և անգամ ատելությունն առաջացնում ազգային ավանդույթների նկատմամբ: Քանի որ համակարգչային խաղերը կառուցված են հիմնականում օտար մտածելակերպին համապատասխան՝ սկսած սյուժեից մինչև կերպարները, ապա երեխաներն քիչ-քիչ օտարվում են ազգային, մշակութային ժառանգությունից:

Կրտսեր դպրոցականների մոտ խաղերից արագորեն հոգեբանական կախվածություն է առաջանում, որն արգելակում է նրա կենդանի շփումը մեծահասակների և իր տարեկիցների հետ՝ միաժամանակ զգալիորեն նեղացնելով նրա գործունեության շրջանակներն ու դերն ընտանիքում: Համակարգիչը դուրս է մղում մանկական խմբային, ավանդական աշխույժ խաղերը, որոնք չափազանց անհրաժեշտ են անհատի ձևավորման համար: Խաղերով այս տեսակ տարվածությունը նպաստում է երեխայի մեջ բացասական հատկությունների զարգացմանը ինչպիսիք են՝ բռնության նկատմամբ հակումներ, բարոյական արժեքների համակարգի խախտում, իրականում հորինվածը միմյանցից տարբերելու անկարողություն, բոլորի վրա իշխելու ցանկություն և անգամ անառողջ ազարտ:

Մեր ժամանակներում շատ են հանդիպում այնպիսի ծնողներ, ովքեր պարզապես իրենց ժամանակը ազատ տնօրինելու համար երեխաներին տալիս են տարբեր գաջեթներ (սմարթֆոն կամ համակարգիչ) և հանգիստ զբաղվում իրենց աշխատանքով: Ցավոք սրտի սա աշխատող տարբերակ է, քանի որ բոլորս էլ գիտենք, որ երեխաները դրանցից չեն հոգնում:

Այսպիսով՝ երեխաները ամբողջ ժամանակը անց են կացնում վիրտուալ տիրույթում: Այս ամենի արդյունքում երեխաների մոտ կարող է առաջանալ այն սխալ պատկերացումը, որ, եթե վիրտուալ դաշտում թույլատրելի է սպանել, քանդել և վնասել, ապա դա կարելի է անել նաև իրական կյանքում: Ստեղծվում է ամենաթողության մթնոլորտ:

Գործնական առաջարկներ

Չաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր չէ երեխաներին գերծ պահել տեղեկատվական տեխնոլոգիաների հետ առնչվելուց, ինչպես նաև այն հանգամանքը, որ բացասականից բացի կան նաև շատ դրական հանգամանքներ, ապա առաջ ենք քաշել մի քանի խորհուրդ/առաջարկներ, դրանց բացասական ազդեցությունը հնարավորինս չեզոքացնելու համար:

- Երեխային պետք է ծանոթացնել Էկրանների հետ ոչ շուտ քան 2-3 տարեկան հասակում: Մտածել և վերլուծել, արդյո՞ք արժե ծնողի զբաղվածությունը կամ ազատ ժամանակը երեխայի տեխնոլոգիաների կիրառման հաշվին ձևավորել:
- Չատկապես վաղ տարիքում պետք է երեխայի հետ շատ խոսել և շփվել, քանի որ տեխնոլոգիաները չեն նպաստում ոչ խոսքի ձևավորման կամ զարգացման, ոչ երևակայության, ոչ այլ իմացական գործընթացների զարգացմանը: Ոչինչ չի փոխարինի երեխայի հետ ձեր կենդանի շփմանը:
- Անհրաժեշտ է հիշել, որ ուղեղի զարգացման համար կարևոր՝ վաղ մանկության ժամանակահատվածում չափազանց և անկանոն ստիմուլյացիան, այդ թվում՝ նաև ֆոնային հեռուստացույցը, կարող է ակնհայտ բացասական հետևանքներ ունենալ հետագա նեյրոկոգնիտիվ ֆունկցիաների վրա:
- Չանդարտ և երկար քունը երեխայի նեյրոդինամիկ զարգացման գրավականներից մեկն է: Թարթող լույսը խոչընդոտում է օրգանիզմում մելատոնինի արտադրմանը և քնի շրջանային ռիթմին: Սա գիտակցելով՝ ծնողը պետք է խուսափի երեխայի սենյակում և առհասարակ ննջասենյակներում հեռուստացույց տեղադրելուց և քնից ամենաքիչը 1 ժամ առաջ ամբողջությամբ բացառի Էկրանների կիրառումը:
- Պետք է հստակ սահմանափակումներ դնել և հետևողական լինել տեխնոլոգիաների կիրառման կանոններին հետևելու հարցում: Պետք չէ ակնկալել, որ երեխաները ինքնուրույն կհետևեն կանոններին և սահմանափակումներին: Վաղ մանկության տարիքում և մինչև 5-6 տարեկան, իսկ այժմ արդեն ավելի ուշ, երեխաները դեռ չեն տիրապետում ինքնակարգավորման մեխանիզմներին:
- Ուսումնասիրությունները փաստում են, որ մանկիկության տարիքից բարձր երեխաներին դեպի Էկրան է դրդում ձանձրույթը, իրական շփման պակասը,

ծնողների զբաղվածությունը: Տեխնոլոգիաների հետ ճիշտ հարաբերությունների հաջողության գրավականը ընտանիքի բոլոր անդամների միջև դրական շփում հաստատելն է: Դրական հաղորդակցումը երեխայի մոտ առաջացնում է անվտանգության զգացողություն և դրական էմոցիաներ, ինչն առավելապես նպաստում է միջուղեղային կապերի ամրացմանը:

- Վատ սովորությունները մեր իսկ՝ ծնողներիս անհետևողական լինելու հետևանքն են: Իսկ վատ սովորությունից դեպի կախվածություն շատ կարճ և արագ ճանապարհ է մեզ բաժանում: Անհրաժեշտ է ձևավորել ընտանեկան դրական սովորություններ և խրախուսել երեխայի հետաքրքրությունները և մասնակից դառնալ դրանց:
- Կարևոր է ընտրել շաբաթվա մեջ մեկ օր ընտանիքով՝ առանց տեխնոլոգիաների անցկացնելու համար: Պետք է երեխային դարձնել այդ օրվա պլանավորման անմիջական սուբյեկտ՝ հաշվի առնելով նրա ցանկություններն ու նախասիրությունները:

Թվային սարքերի հետ առնչվելու ճիշտ ժամաքանակը, կենդանի հաղորդակցման քանակական և որակական աճը կնպաստեն երեխաների խոսքի և հաղորդակցման հմտությունների, հուզականային ոլորտի և ինքնակառավարման մեխանիզմների ճիշտ ձևավորմանն ու զարգացմանը:

Եզրակացություն

Տեխնոլոգիաները մեր կյանքի անբաժանելի մասն են և այլևս հնարավոր չէ առօրյա կյանքից տարանջատել դրանք: Ավելին, տեխնոլոգիաները շարունակելու են զարգանալ և ներխուժել կյանքի ամենամանրամասնական բնագավառներ:

Ինչպե՞ս վարվել երեխաների հետ՝ խրախուսել, թե՛ արգելել տեխնոլոգիա-երեխա կապը, անհանգստանա՞լ, թե՛ վերապահումներով մոտենալ հետազոտությունների արդյունքներին:

Թերևս անմիջական և միանաշանակ պատասխան դժվար է տալ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ տեխնոլոգիաները անսահման հնարավորությունների աշխարհ են բացում կյանքի բոլոր բնագավառներում, սակայն դրանք իրենց հետ նաև մեծ ռիսկեր են առաջ բերում: Այս սերունդն ունի ուղեղի անդադար գերստիմուլյացիայի վտանգ և այնպիսի հնարավորություններ, ինչպիսին չեն ունեցել նրանց ծնողները, նրանք սնունդ ընդունելիս և ամեն ազատ րոպե դիտում են հեռուստացույց, մանկուց օգտվում են սոցիալական ցանցերից և վայրկյանական հաղորդակցման միջոցներից, իսկ գիտությունը դեռ շարունակում է բացահայտել այս սովորույթների ազդեցության ընդհանուր և իրական հետևանքները: Մենք հիմնավորում ենք մեր կարծիքը ընթացիկ ուսումնասիրությունների հիման վրա, որոնք, սակայն, դեռ վերջնական չեն: Այս թեման լիարժեք հասկանալու և տեխնոլոգիայի իրական գիտական և վավեր ազդեցությունը երեխաների վրա գտնելու համար դեռ անհրաժեշտ է առաջիկա տարիներում շարունակել դիտարկել զանազան տեխնոլոգիաների ազդեցության ենթարկված երեխաների զարգացման փուլերը և բազմակի տիրույթները: Ամբողջովին կտրել երեխաներին տեխնոլոգիաներից անիրատեսական է: Սա կպահանջի ընտանիքի բոլոր անդամների անհավանական ճիգեր և կենսակերպի հսկայական փոփոխություն: Արդյո՞ք պատրաստ են դրան մեծահասակները՝ ծնողները և ծնողների ծնողները, ովքեր այսօր ավելի քան երբևէ քսանչորս ժամ շոքապատված են տեխնոլոգիաներով: Հոգեբանական տեսանկյունից հենց տեխնոլոգիաները չեն, որ խնդիր են առաջացնում: Ավելին, դրանք նպատակային և չափավոր օգտագործելու դեպքում ստանում ենք մեծագույն առավելություններ, երեխայի կյանքում մտցնում դրական փոփոխություններ: Որպեսզի երեխաները հնարավորություն ունենան իրենց կյանքում առողջ կերպով օգտագործել տեխնոլոգիաները և վայելել դրանց առավելությունները, անհրաժեշտ է ապահովել ծնողական վերահսկողություն: Ծնողները, ովքեր գնահատում են տեխնոլոգիաների առավելությունները և ցանկանում են իրենց երեխաներին

պատրաստել 21-րդ դարի աշխատաշուկայի և առօրյա հարմարավետության պահանջներին, պետք է հասկանան, որ այնուամենայնիվ, իրենք են պատասխանատու երեխաների տեխնոլոգիաների հետ առնչվելու հիմնական կանոնների պահպանման համար: Գոնե երեխայի վաղ տարիքում ծնողն ունի կանոններ սահմանելու, մտածված որոշումներ կայացնելու և դրական սովորույթներ ձևավորելու գերուժ: Վաղ մանկության տարիքը այն ժամանակաշրջանն է, երբ ծնողն է միակ պատասխանատուն ու երեխա-տեխնոլոգիա հարաբերության ձևավորողը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Վ. Մանտուլենկո «Մեդիակրթությունը ժամանակակից աշխարհում»
2. Վ. Գլասեր «Դրական կախվածություն»
3. Մ. Աստվածատրյան, Գ. Թերզյան, Ա. Թորոսյան, Հ. Շարխաթունյան «Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում»:
4. Влияние планшета на ребенка (2-13 лет) [Электронный ресурс]: URL: <http://study-english.info/globalization03.php> (дата обращения 11.02.2017)
5. Багаева Е., Мылласова О.В. Интернет в жизни современной молодежи: проблемы и перспективы // Материалы XIX Международной конференции «Культура, личность, общество в современном мире: методология, опыт эмпирического исследования / редакционная коллегия: Грунт Е.В, Меренков А.В., Рыбцова Л.Л., Старшинова А.В. - Екатеринбург, УрФУ, 2016.
6. Тхостов А. Ш. Влияние современных технологий на развитие личности и формирование патологических форм адаптации: обратная сторона социализации // Психологический журнал. – 2005. – № 6
7. Смирнов 2000:140,141
8. Гордеев А.В. Увлечение компьютерными играми. психологический аспект. К. 2004
9. Борода К. В. 2008. Интернет-зависимость у детей и подростков, Нью-Йорк
10. Н. Г. Мякинник «Компьютер в жизни детей и подростков: польза или вред?»
11. Выготский Л.С. Психология развития ребенка. – М.: Смысл; Эксмо, 2004. — 512 с.
12. Judith Graham, Extension human development specialist, Unive
13. The Computer Culture, edited by S. H. Evans and P. Clarke, White River Press, 1984,
14. THE IMPACT OF INFORMATION TECHNOLOGY ON THE DEVELOPMENT OF COGNITIVE ACTIVITY OF CHILDREN Yakovin A. Myltasova O
15. http://scimath.unedu/MIM/files/research/Jakopovich_AR_FinalLa.pdf